32223

Հմ

ՃԱՆԱՊԱՐՀ

ՍՐԲՈՅ ԽԱՉԻ

ԸՍՏ ԽՆԴՐՈՅ

ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ

ԽԱՐԱՍՈՒԻ ԽՐԻՄՈՒ

32923

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՍ

1858

ՀԱՆԱՊԱՐՀ

ՍՐԲՈՅ ԽԱՉԻ

ՅԵԼԱՆԵԼՆ ՅԱՒԱՆԴԱՏԱՆԷ

Եկանէ Նշան Թագաւորին՝
Փայլի պայծառ խորհուրդ խաչին,
Քրիստոս մարմնովըն կուսածին՝
Որ կախեցաւ մերկ 'ի փայտին։

Օրհնեալ Տէր մեր և փրկիչ Յիսուս
Քրիստոս։
Հայր մեր։ և Ողջ։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս, դու որ թագաւոր ես երկնի և երկրի։ Ահա ես ան մեղաւորն եմ, որ իմ անթիւ մեղքերովս հոգիս վերաւորեցի։ Ուստի կաղաղակեմ առ քեզ, քու սուրբ

վերքերէդ վաղած արիւնովը լուա մաքրէ հոգիս։ Թէ որ մինչև հիմակ՝ իմ այնչափ և անհամար մեղքերուս պատիժը չի տուիր ինծի՝ այն քու անպատմելի գթութեանդ և ողորմութեանդ պարգևն է. ուստի կը ճանչնամ, և բոլորով սրտով մեղայ կը գոչեմ։ Թէ և մեղաւոր եմ, այլ գիտեմ որ դու մեղաւորին մեռնիլը չես ուզեր, այլ կը սպասես դթութեամբ և համբերութիւն, որ մեղայի դայ։ Ուրեմն ով ողորմած և մարդասէր փրկիչ հոգւոյս Յիսուս, ես թէ և շատ աւելի մեղաւոր եմ, այլ քու սուրբ արիւնովդ գնուած եմ։ Կաղաչեմ, քու սուրբ չարչարանքներուդ սիրոյն համար թող ըլայ, մի թողուր զիս այսուհետև մեղանչելու. և մեղքի մէջ իյնալու պատճառներէն հեռացուր զիս սուրբ շնորհքովդ։ Եւ արժանի արա զիս այն սուրբ ներողութիւններուն, որ շնորհուած է Երուսաղէմ քու սուրբ ուխտատեղիներդ գացող պատուողներուն։

Եւ այս աւուր ըրած Ջերմեռանդութիւնիս մասնակցէ նաև քաւարանի

հոգիներուն, և զմեզ ալ արժանի արա քու սուրբ տեսութեանդ նոցա հետ. Ամէն։

Եւ երթալով առաջին պատկերին առջևը պէտք է երգել.

ԵՐԳ

Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին,
Ցողէր արտասուքը ցաւագին.
Յորժամ լսէր ըզծարաւին։

Ա. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով փրկեցեր զաշխարհ։

Յիսուս Քրիստոս կը դատապարտուի Պիղատոս դատաւորէն.

Պիղատոսին դատաստանը՝ Բարաբբա անունով արնտէր աւազակը կազատէ մեռնելէն. և անմեղ Յիսուսին խաչի վրայ մեռնելու վճիռը կուտայ։ Բայց դու ով քրիստոնեայ, որ կը սոսկաս Պիղատոսի այն անգութ վճռէն վրայ, դու որչափ անգամ, քու մեկ կամքդ առաջ տանելու համար, քու հանգիստդ փնտռելու համար կը դատապարտես անմեղ Յիսուսը սրտիդ մէջ. խեղճ հոգիդ աւելի սիրելով մահկանացու փուճ մարմնդ։

ԱՂՕԹՔ

Ո՜վ Աստուած իմ Յիսուս, ես այն դարշելի մեղաւորն եմ, որ իմ չար կամքս, մեղքս՝ քեզմէ աւելի սիրեցի, զքեզ իմ մեղքերուս ղոհ ըրի. եւ ամէն մեղք գործածիս զքեզ նորէնոր մահուան արժանի դատեցի։ Վա՜յ ինձ, կը ղղջամ կը ցաւիմ. վասն զի դու դարձեալ համբերեցիր ինծի, և սիրեցիր զիս. և իմ հոգւոյս փրկութեանը կը ցանկաս միշտ. թէ որ նորէն սրտանց քեզի դառնամ՝ կընդունիս զիս. կը փնտռես զիս սիրով. և կընկերես իմ անօրէն մեղքերուս։ Ուրեմն ես ինչպէս քու այսչափ և այսպիսի սիրոյդ դէմ ապերախտ դտնուիմ այսուհետև։ Չէ տեր իմ Յիսուս, չէ. թող հիմակ հոս իմ սրտիս մէջ, թող մեռնին իմ դարշելի մեղքերս։ Եւ դու մի մեռնիր Յիսուս Աստուած իմ։

Ուստի կը խնդրեմ, այն Պիղատոսին առջև ինծի համար դատապարտուածիդ արդեանցը համար ըլլայ՝ տուր ին-

ծի շնորհք որ մնացած կեանքս սրբութեամբ անցընեմ, և ահաւոր դատաստանիդ օրը արդարանամ։

Հայր մեր։ Ողջոյն և Փառք Հօր։
Ողորմեաց մեզ Տէր, ողորմեաց մեզ։

Եւ երթալով երկրորդ պատկերին առջեւը։

Ե Բ Գ

Կացեր հանդէպ քում ծառային,
Պիղատոսի դատաւորին։
Լսեալ զանգութ վրձիռ խաչին։

Բ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Ծանր խաչափայտը՝ Յիսուս կրեալ կակը կառնէ։

Յիսուս Որդին միածին՝ Հօր Աստուծոյ կամքին նուիրելով իւր կամքը՝ խաչափայտը կռնակը առնելով կիմացընէ մեզի, որ ինչ խաչ ալ որ պատահի մեզի՝ լաւ գիտնալով որ Աստուծոյ սուրբ կամեցողութեամբը տրուած է մեզի, համբերութեամբ քաշենք խաչերնիս։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս՝ զիս ըստեղծածիդ՝ և այնչափ բարիքներ ինծի պարգևածիդ փոխարէնը՝ աս խաչն է եղեր. վասն զի ես որչափ որ մեղք կը գործեմ, նորէնոր խաչը քու կռնակդ կը բարձընեմ։ Իմ փրկութեանս համար որչափ որ խաչ կուտաս ինծի, և ես ապերախտ ըլլալով՝ որ կը տրտընջամ, քու տուած խաչէդ կը փախչիմ։ Վա՜յ ինձ, կը զղջամ կը ցաւիմ. կառաջադրեմ, որ այսուհետև ինչ խաչ որ ունենամ, ճանչնամ թէ քու սուրբ կամքդ եկած է ինծի, և ընդունիմ սիրով. որպէս զի կարենամ քեզի հետ, և քու սիրոյդ համար համբերութեամբ տանել խաչս. և արժանի ըլլամ քեզի հետ և քեզմով մխիթարուիլ յաւիտեան. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք։
Ողորմեայ մեզ Տէր ողորմեայ մեզ։

Եւ երթալով երրորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Ստեղնեալ ծառոյ կենաց փայտին,
Այն որ բուսաւ 'ի մէջ դրախտին.
Փոխան եռուր մեղ փայտ խաչին։

Գ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Յիսուս խաչը կռնակը առաջին անգամ երեսին վրայ գետինը կիյնայ.

Յիսուս այնչափ և անտանելի չարչարանքներով և տանջանքներով վերջին աստիճանի տկարացած ըլլալով, առաջին անգամ երեսի վրայ գետինը կիյնաւ, որպէս զի իմացընէ մեզի՝ թէ մեր անօրէն մեղքերը՝ որչափ ծանրացուցեր են Քրիստոսի խաչը. և ուժ կուտայ մեզի մեղքերնուս ծանրութեանը տակէն ելլելու։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս, դու որ քու ուժովդ բոլոր աշխարհքիս ծանրութիւնը կը վերցընես, ուրեմն գետինը ինկածդ խաչին ծանրութենէն չէ, այլ իմ մեղքերուս ծանրութիւնն է. քու ուժ չունեցածդեղ չէ, այլ ինծի ուժ տալու համար է։ Ես մինչև հիմակ հոգւոյս յարդը չի ճանչցայ, և հազար մէկ մեղքերու մէջ ինկայ։ Վա՜յ ինձ Տէր իմ, կը ցաւիմ։ Լաւ գիտես դու որ ես տկար եմ, հոգ եմ և մոխիր քու գիմացդ՝ եթէ դու չօգնես ինծի՝ և ուժ չտաս ինծի, ես նորէն մեղքերու մէջ կը կորսուիմ։ Ուրեմն ո՛վ գթած Տէր իմ. դու ընդհանուր տուր ինծի, որ քու չարչարանքներդ ուժ առնելով՝ աս վայրկեանիս ջանամ մեղքերուս բեռին ծանրութեանը տակէն ելլել. և միշտ ապաշխարութեամբ անցունեմ մնացած կեանքս. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք։

Ողորմեայ մեզ Տէր, ողորմեայ մեզ։

Երեքալով չորրորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Զիմ առ 'ի մեզս անկեալ զոգի,
Որ ծանրացաւ յուսրդ կըրկին,
Առ մահակից քեզ 'ի խաչի։

Դ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Յիսուս ձամբան երրորդ ժամանակը՝ կը հասնի ամենօրհնեալ Մայրը միածին Որդւոյն.

Մարիամ Աստուածածին՝ բոլոր մարմինը վերաւորած և արիւնով ներկուած երբոր տեսաւ իւր միածին որդին, ան ինչ ցաւ էր որ խմցաւ իւր սրտին մէջ։ Մայրերը թող լաւ մոածեն հոս, որ երբ մէկ սիրած բանները կը զրկուին, կամ սիրելի զաւակին կը բաժնուին, թող սուրբ Աստուածածինին սորվին համբերութեամբ քաշելը ան կսկիծը։

ԱՂՕԹՔ

Ո՛վ փրկիչ իմ Յիսուս, և դու ա-
մենագթած մայր Աստուծոյ. ան սու-
կալի ցաւին և կսկիծին համար թող
ըլլայ, որ մեկզմեկ տեսած ժամանակ-
նիդ իմացաք ձեր սրտին մէջ: Լեցու-
ցէք իմ սիրտս ալ նոյն ցաւով և ջը-
նորհքով, որ կատարեալ սրտով կը զեղ-
ջամ և կը ցաւիմ իմ ամէն մեղքերուս
վրայ. և այսուհետև ինչ ցաւ և ինչ
կսկիծ որ գայ իմ վրաս, առանց տըր-
տունջալու համբերութեամբ տանիմ, և
աշխարհքիս անցաւոր բաներէն սէրս
վերցընելով, այսուհետև միայն Ա-
ստուծոյ սիրով վառուած սրտով ապ-
րիմ և մեռնիմ. Ամէն:

Հայր մեր. Ողջոյն. և Փառք.
Ողորմեայ մեզ, և այլն:

Երթալով հինգերորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Եկ տես զորդիդ մայր ցաւագին,
Զի անգութ սուր խոց պարսին,
Թափ անցանէ ընդ սիրտդ ուժգին:

Ե. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիս-
տոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ
խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշ-
խարհս:

Սիմոն Կիւրենացի Յիսուսին խաչը վերցընելու օգնորդիւն կրնէ.

Յիսուսը խաչ հանելու տանող դա-
հիճները՝ բռնութեամբ կը բռնեն կը
բերեն Սիմոն Կիւրենացին, որ Յիսու-
սի խաչը վերցընելու օգնութիւն ընէ:
Տեսէք մեյմը՝ թէ ինչպէս Սիմոն Կիւ-
րենացին, չուզելով կը բռնէ Յիսուսին
խաչը: Ահ, թէ որչափ քրիստոնեա-
ներ կը գտնուին, որ դարձեալ մեղքեր
գործելու չեն ամրչնար, այլ մեկ բա-
րեգործութիւն մը ընելու կամրչնան:
Աշխարհքիս համար քաշած նեղու-
թիւններն ամենեին աչքերնուն չերևի-
նար, այլ Աստուծոյ սիրոյն համար մեկ

պղտի նեղութիւն մ'ալ քաշել չեն ու-
զեր։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Յիսուս, ես որչափ անգամ քու
խաչդ վերցընելու դաներ ամրցեր և փա-
խեր եմ. ու մէկ բարեգործութիւն մը
չեմ ուզեր ընել։ Սատանային, աշխարհ-
քիս և մարմնոյս չար կամքը կատարե-
լու չեմ ամրցեր։ Եւ մեղքերուս հա-
մար ինծի պատիժ որուած խաչը ա-
մրցեր եմ վերցընելու։ Վա՜յ ինձ, կը
զղջամ. այսուհետև սիրով և առանց
ամաչելու քու խաչդ վերցընելու հաս-
տատուն դիտաւորութիւն կը դնեմ։
Դու տուր ինծի շնորհացդ ուժը, որ
քեզի հետ վերցնեմ խաչդ այսուհե-
տև, և իմ բարի գործքերովս՝ թեթև-
ցընեմ քու խաչդ. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք։
Ողորմեաց մեզ, և այլն։

Երթալով վեցերորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Վասն պարտուց մեղաց մարդկան,
Ոչ խորշեցար մատնիլ 'ի մահ.
Այլ քոյ սիրոյդ եմ անարժան։

Զ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Վերոնիքան իւր լաչակովը կը սրբէ Յիսուսի երեսին քրտինքը.

Վերոնիքան տեսնալով Յիսուսին երեսը արիւնլուայ և քրտնած, կը ՀՐՂՔԷ դահիճներուն բազմութիւնը մէկդի կընէ, առանց վախի կը մօտենայ Յիսուսին երեսները սրբելու. Յիսուսին սիրականները կը վախնան՝ հեռու կը փախչին իրմէն. կը վախնան Յիսուսին անմեղութեանը վկայել։ Բայց Վերոնիքայ՝ վկայ նորա անմեղութեանը՝ և Աստուծոյ Որդի ճանչնալով Յիսուսը՝ իւր լաչակովը կը սրբէ նորա արիւնլուայ երեսները։ Ա՜ մեզի մեծ օրինակ է, որ մենք Աստուծոյ սիրոյն համար

մէկ բարի գործք մը՝ մէկ ծառայութիւն մը ըրած ժամանակիս, չամրչնանք չի քաշուինք, այլ համարձակ Յիսուսին սէրը ցուցընենք, ինչպէս սրտերնուս մէջ՝ նոյնպէս դրսէն։

ԱՂՕԹՔ

Ո՜վ Աստուած իմ Յիսուս, ահա ես այն կոյր մեղաւորն եմ, որ իմ մանքուր հոգիս՝ անթիւ և անհամար մեղքերովս աղտոտեցի։ Ես ան անզգամ վախկոտն եմ, որ մարդկներէն վախնալուս, և մարդկանցմէ փառք ստանալուս, ըզքեզ շատ անգամ մինակ թողուցի փախայ, և կամ դրսուանց զքեզ ուրացայ։ Վա՜յ ինձ, կը յաւիմ Յիսուս. ահա այսուհետև կառաջադրեմ, որ Վերոնիքային պէս առանց վախի համարձակ սիրեմ և պաշտեմ զքեզ։ Միայն դու Աստուած իմ, ընդունէ իմ սա առաջադրութիւնս, և քու սուրբ երեսներդ կաթած մէկ կաթիլ արիւնովը՝ լուա իմ բազում մեղքերուս աղտեղութիւնը, որ զքեզ միշտ անվախ սիրելով

և սրբութեամբ ծառայելով՝ յաւիտե-
նական սիրոյդ արժանի ըլլամ։ Ամէն։

Հայր մեր։ Ողջոյն։ և Փառք։
Ողորմեայ մեզ, և այլն։

Երթալով եօթներորդ պատկերին առջևը։

ԵՐԳ

Արքայական փոխան թագին,
Պըսակ փըշեայ 'ի գլուխ եդին։
Յանարգական 'ի մահ խաչին։

Է։ ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիս-
տոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ
խաչիդ քով սրբով փրկեցեր զաշ-
խարհս։

Յիսուս երկրորդ անգամ գետին
կիյնայ։

Յիսուս Երուսաղեմէն ելլելով եր-
բոր սկսաւ Գողգոթա լեռը ելլել, եր-
կրորդ անգամ ինկաւ գետին։ Եւ ահա
ասով կիմացընէ մեզի, որ երբ մենք
Աստուած միտքերնէս հանենք, շու-
տով նորէն մեղքի մէջ կիյնանք կը
կորսուինք։

ԱՂՕԹՔ

Ո՜վ Աստուած իմ Յիսուս, ես քու
պատուիրանքներդ չի պահածիս և ան-
հոգ եղածիս վասները՝ հիմակ սկսայ

քու Հանչնալ։ գիտցայ իմ մեծ կո-
ղուսանները։ վասն զի զքեզ միաքս չի
բերածիս համար, այնպէս գիւրու-
թեամբ մեղքերու մէջ կիյնայի։ Վայ
ինձ, կը ցաւիմ կառաջադրեմ այսու-
հետև որ զքեզ ամենեին միաքէս չի հա-
նեմ, քեզմէ չի հեռանամ, որպէս զի
մեղքերէն հեռու ըլլամ։ Բայց զի ա-
ռանց քու շնորհիդ՝ անկարելի է ինձ
զքեզ ունենալ միշտ իմ սրտիս մէջ,
ուրեմն ողորմէ հոգւոյս, և բնակէ սըր-
տիս մէջ շնորհօքդ։ Ամէն։

Հայր մեր։ Ողջոյն։ և Փառք։
Ողորմեայ մեզ, և այլն։

Երթալով ուխտերորդ պատկերին առջևը։

ԵՐԳ

Մի թողուր զիս փրկիչ Յիսուս,
Քանզի դու ես իմ միակ յոյս։
Մաղթեա վասն իմ Տիրամայր Կոյս։

Ը. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիս-
տոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ
խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշ-
խարհս։

Յիսուս իւր վրայ շացող կնիկ
մարդիկը կը միխիթարէ։

Յիսուս Քրիստոս իւր ցաւը՝ իւր
տանջանքները թողլով, զինքը կսկծա-
ցող կնիկ մարդկանց սիրտ կուտայ կը
միխիթարէ ըսելով։ Դստերք Երուսա-
ղեմի, իմ վրաս մի լաք, այլ ցաւեցէք
լացէք ձեր, և ձեր զաւկներուն վրայ։
Աս խօսքով ուզեց Յիսուս խմացընել
մեզի՝ թէ աշխարհքիս վրայ լալու բան
միայն մեղքն է։ և մեղքերնուս վրայ
լալուն պէս օգտակար լաց չկայ։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս Քրիստոս աշխարհքիս մէջ ահա ինձմէ մեծ մեղաւոր չիկայ, վասն զի ես միշտ դիտումիտեամբ և ուզելով այսինքն կամայ մեղանչեր եմ։ Այլ ահա սրտանց մեղայ կը գոչեմ։ Վա՛յ ինձ կը ցաւիմ։ Տուր ինծի կաղաչեմ սուրբ Հոգիդ, որ աս աշխարհքիս մէջ որչափ կապրիմ, միշտ լամ և ապաշխարեմ մեղքերս։ որպէս զի 'ի հանդերձեալն միշտ ուրախանալու արժանի ըլլամ։ Ամէն։

Հայր մեր։ Ողջոյն և Փառք։
Ողորմեայ մեզ, և այլն։

Երթալով ինն երորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Տուր իմ աչացս յորդ արտասուս։
Զընջել լուսալ զաղտ բիծ հոգւոյս։
Զի մի կորեայց խսպառ անյոյս։

Թ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Ցիսուս երրորդ անգամ գետինը կիյնայ.

Յիսուս Քրիստոս Գողգոթա լերան գլուխը մօտենալով այս երրորդ անգամ խաչը կանակը գետինը կիյնայ։ Եւ անով մեզի կիմացընէ, որ մեղքին պատճառներէն հեռու չի փախչողը՝ միշտ ան մեղքերուն մէջը իյնալու վտանգներէն հեռու չէ։ Եւ համարէ թէ արդէն դժոխքին դուռին մօտեցեր է։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս, քու այս պէս նորէնոր գեղինը ինկնալդ կիսա՝ ցընէ ինծի, որ իմ դրած անհաստատ առաջադրութիւններուս կը նմանի. քանի՛ քանի՛ անգամ դրած առաջադրութիւններս ոտքի տակ առեր կոխ կըլլտեր եմ։ Ի՞նչ բանի համար. մէկ բարեկամիս սէրը չի կոխելու համար, մէկ պզտի վաստակի մը համար. մարմնոյս մէկ կամքը առաջ տանելու համար։ Վա՜յ ինծի, կը յաւիմ, կը խնդրեմ ողորմէ ինծի. տուր շնորհքդ, որ ասկից վերջը առաջադրութեանս վրայ հաստատ կենամ. հեռու փախչիմ ան տեղերէն, ան բաներէն որ միշտ ինծի մեղաց պատճառ եղեր են և կըլլան։ Որպէս զի միշտ ասկից վերջը, քու սիրոյդ ապրիմ և տուրբ արքայութեանդ արժանի ըլլամ. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք.
Ողորմեայ մեզ, և այլն։

Երթալով տանտերոջդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Կա՛ որ ունէր զաշխարհ 'ի բոլոր,
Բառնայր յինքեան ըզվայրս խաչին.
Հանեալ 'ի գլուխս Գողգոթային։

Ժ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիս-
տոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ
խաչիդ քով սրբով փրկեցեր զաշ-
խարհս։

Դահիճներդ մերկացուցին Յիսուսը, և ղեղի խմցուցին իրեն.

Յիսուս Քրիստոս Գողգոթա լերան
գլուխը ելածին պէս՝ մէկէն անգութ
դահիճներդ՝ քաշելով քաշկռտելով
հանեցին Յիսուսի վրայի զգեստները և
մերկացուցին զինքը։ Բայց որովհետև
առաջուց այնչափ ծեծով և տանջանք-
ներով պատռատած էր բոլոր մարմինը,
և ոտքէն մինչ ի գլուխը վիրաւորած,
ուստի ան վէրքերուն կպած զգեստնե-
րը՝ երբոր քաշեցին հանեցին, նորէն
վէրքերուն բերանները բացուելով սկը-
սաւ յորդ արիւնը վազել. և որպէս զի
ան սաստիկ ցաւին չի դիմանալով չի

մեռնի, լեղի խմցուցին, որ հարբի ցա-
ւերը չիմանայ։ Եւ ահա այս նշան էր
մեր գործած մեղքերովնիս հոգիներ-
նուս մերկ մնալը 'ի շնորհաց։ Եւ լե-
ղին նշան է, որ բարեգործութիւնը՝
թէ և ճար է հոգիներնուս, այլ մեղի
դառն կուգայ։

ԱՂՕԹՔ

Ո՜վ Աստուած իմ Յիսուս Քրիստոս.
ահա ես ան անօրէն մեղաւորն եմ, որ
իմ չար գործքերովս խեղճ հոգիս քու
սուրբ շնորհացդ զգեստներէն մերկա-
ցընելով, զքեզ Աստուած իմ մերկա-
ցուցի։

Ես եմ ան չարագործ մեղաւորը, որ
հոգւոյս վէրքերուն պէտք եղած ճա-
րերը չի գործածելով, քու սուրբ վէր-
քերուդ ցաւերը նորոգեցի։ Լեզուս չի
բռնելով, այսինքն բամբասանքով՝ ա-
նէծքով՝ հայհոյանքով, սուտով, անուն
կտրելով, և երդումներով՝ Աստուած
իմ՝ քեզի լեղի խմցուցի։ Վա՜յ ինձ
կը ցաւիմ. մեղայ Քեզմէ. այսուհետև

ԳԱՏՍ
ՄԱՏՍՆ

քու սուրբ շնորհքովդ հանեմ սրտէս իմ չար սովորական մեղքերս, և նա՝ համ միշտ բարեգործութեան հեռուիլ. և մեղքերուս ցաւը՝ կսկիծը միշտ սրտիս մէջ գամուած պահելով, բարի մահուամբ արժանի ըլլամ վայելելու երկնից արքայութիւնդ. Ամէն:

Հայր մեր. Ողջոյն. և Փառք.
Ողորմեաց մեզ Տէր, և այլն:

Երթալով մեսասանելորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Եռուն նրմա ըմպել զնեղն,
Եւ զպատմուճանն մերկացին.
Այժմ որ զգեցոյց զԱդամն հին:

ԺԱ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս:

Յիսուս խաչին վրայ կը գամուի իմ մեղացս համար.

Յիսուս Քրիստոսը՝ խաչին վրայ գամուելով կիմացընէ մեզի մեր ապերախտութիւնը, որ ոչ միայն ստեղծեց ըզմեզ, այլ և անչափելի գթութեամբ և ողորմութեամբ խնամեց և պահպանեց: Եւ մեք անգթութեամբ ամէն օր մեր մեղքերովը զինքը խաչ կը հանենք, զնա՝ որ մեր մեղքով մեռած հոգին կոչնցընէ, մեզի համար մեռնելով: Եւ մենք ընդհակառակը, մեր մեկ չար կամքը առաջ տանելու համար, զինքը նորէնոր կը մեռցընենք մեր սրտին մէջ, միանգամայն մեռցընելով նաև մեր հոգին:

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ, ո՛վ քաղցր Յիսուս. ահա այդ խաչին վրայ ձեռքերդ ոտքերդ գամող անգութ անօրէն դահիճը ես եմ, որ ամէն մեղք գործելու ժամանակիս՝ նորէ՛ի նոր ան սոսկալի գամերը կը զարնեմ։ Վա՜յ ինձ, կը զղջամ և կը ցաւիմ։ Յիսուս՝ թող հինգ սուրբ վերացդ սիրոյն համար ըլլայ, տուր ինծի ընդհանրապէս, որ մեղքերուս դառն շղթաները կոտրտեմ. և աս իմ սիրտս գամեմ ապաշխարութեան գամերով, քու սուրբ խաչիդ վրայ, բոլոր կեանքիս մէջ լալով ողբալով, որպէս զի յետ մահուանս ալ քեզի հետ միանալու արժանի ըլլամ. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք.
Ողորմեաց մեզ, և այլն։

Երթալով երկոտասաներորդ պատկերին առջևը.

ԵՐԳ

Ի յուրբաթու ժամ երրորդին,
Բնեռեցաւ Ցերն 'ի խաչն,
Զի քաւեսցէ զմեղս աշխարհի։

ԺԲ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Յիսուս խաչին վրայ կը կացնեցընեն
երկու աւազակներուն մէջը.

Յիսուս Քրիստոս Տէր և Աստուած, խաչին վրայ դեռ սուրբ հոգին չաւանդած, իւր աջ կողմի աւազակը որ խաչուած էր, ողորմելով խոստացաւ նմա արքայութիւն. և ասով մեծ յոյս տուաւ մեղաւորներուն իրենց մահուանը վերջի կետին, որ յոյսերնին չի կտրեն։ Իսկ ձախակողմեան աւազակին մեղայ մէջ մեռնիլն ալ, մեծ երկիւղ է ան մեղաւորներուն, որ միշտ մեղքերու մէջ մնալով յոյսերնին միայն Աստուծոյ ողորմութեանը կը դնեն. և առանց զղջալու նոյն մեղքերուն մէջ կը մեռնին։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր իմ և Աստուած իմ, դու որ խաչեն վրայ գլուխդ ինծի խոնարհեցընելով՝ զիս քեզի կը կանչես, զիս գըրկելու համար թևերդ բացեր ես, սուրբ կողիդ վերքը ցուցընելով՝ իմ սիրտս կուզես քեզի ընծայեմ։ Դու իմ հոգիս գնեցիր անգին սուրբ արիւնովդ. և ես նորէն գործած մեղքերովս՝ դարձեալ սատանային ծախեցի։ Այ՛ն ինձ, կը զըղջամ բոլոր սրտովս. յիրաւի Տէր իմ և Աստուած իմ՝ ես մեղաւոր եմ, ապերախտ եմ, այլ դարձեալ դու ողորմած ես և մարդասէր. քեզի փառք կը հաստատիս միշտ մեղաւորին ողորմիլը. դու կը սիրես մեղայի եկող մեղաւորները։ Ուրեմն ողորմէ իմ հոգւոյս՝ Յիսուս փրկիչ իմ. տուր շնորհքդ, որ ասկից վերջը հեռանալով 'ի մեղաց, մնացեալ կեանքս ապաշխարութեամբ անցընեմ. և մահուանս ժամանակին աջակողմեան աւազակին պէս սուրբ ալեքայութիւնդ հրաւիրուելու արժանի ըլլամ. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք. Ողորմեաց մեզ, և այլն։

Երթալով երեքտասաներորդ պատկերին առջևը.

ԵՐԳ.

Աջակողմեան աւազակին,
Բացեր ըզդուռն ապին դրախտին.
Մուծցես եւ զիս Տէր ընդ նըմին։

ԺԳ. ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Յիսուսը խաչեն կիչեցրեւեն և կուռուան տուրբ Աստուածածնայ գիրկը.

Մարիամ Աստուածամայր, իւր միածին Աստուածորդին գիրկը առնելով, ահ թէ որչափ սաստիկ ցաւ սրտի ունեցաւ. լաւ գիտնալով թէ որչափ քրիստոնեաներ իւր որդւոյն խաչին վայ մեռնելէն մէկ օգուտ մը ունենալու չէն։ Եւ մանաւանդ թէ իրենց չար մեղքերովը, Յիսուսին դեռած սիրտը զայրացընելով, և Մարիամ Աստուածամօրը նորէն սիրտը վիրաւորելով, ահ չեմ գիտեր ինչպէս պիտի աղաստին Աստուծոյ սոսկալի դատաստանէն։

ԱՂՕԹՔ

Ո՜վ Մայր ողորմութեան սուրբ Աստուածամայր, դարձուր մէյմը դեռած աչքերդ որդւոյդ վրայէն, և նայէ սա միածին որդիդ խաչին վրայ մեռցընողին վրայ։ Վա՜յ ինձ կը զղջամ. ահ ես եմ այն անգութ մեղաւորը՝ որ որդիդ խաչ հանեցի և պիղծ գործքերովս զինքը մեռուցի։ Այլ ինչ. միթէ դարձեալ չէս ողորմիր ինծի, միթէ չէս լսեր իմ լացիս ձայնին։ Ողորմէ Տիրամայր ողորմէ։ Մեռեալ որդւոյդ վայ խմացած ցաւիդ կսկիծիդ համար թող ըլլայ։ Քու ան թանկագին արցունքներուդ մէկ կաթիլը առ և ընծայ ըրէ իմ կողմանէս միածին որդւոյդ, որ ընդունի իմ սա զղջումս, և թողութեան արժանի ընէ ահեղ դատաստանին. Ամէն։

Հայր մեր. Ողջոյն. և Փառք. Ողորմեայ մեզ, և այլն։

Երթալով վերջի պատկերին առջևը.

ԵՐԳ.

Ո՛տայր ենձ լալ ընդ քեզ Մայր Կոյս,
Դու առաջին իմ վերջին յոյս.
Ի խաւարէ մեղացս հան ըլյս։

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳԻՍՏ

Երկիրպագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ և օրհնեմ զքեզ, որ խաչիւդ քով սրբով փրկեցեր զաշխարհս։

Յիսուսը գերեզման կը դնեն.

Յիսուս մեռնելէն վերջը՝ փառաւորապէս գերեզման դրուելովը մեզի կիմացընէ որ առանց չարչարանաց և խաչի պատիւ չկայ։ Ալքայութեան փառքին չի կրնար մարդ հասնիլ, առանց աս աշխարհքիս մէջ խաչ նեղութիւն քաշելու։

ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս Քրիստոս, ես մինչև հիմակ կարծէի թէ փառք ըսած բանը՝ աս աշխարհքիս մեծութիւնը հարստութիւնն է։ Անոր համար միշտ քու խաչդ, այսինքն աշ-

խարհ.քիս նեղութիւններէն կը փախչէի. միայն աշխարհ.քիս ուրախութիւնները կը փնտռէի, բայց շատ մեծ խաբուած էի: Ուստի ահա հիմակ սրտանց կը զղջամ և կը ցաւիմ. խոստանալով որ բոլոր կենացս մէջ այսուհետև քու պատուիրանքներուդ հնազանդ ըլլամ: Ինչ խաչ որ ինծի տաս, սիրով համբերեմ քու սիրոյդ համար: Որպէս զի քանի որ ողջ եմ, քու սուրբ խաչիդ ճամբան երթալով՝ բարի գործքերով զարդարուած հոգիս քեզ յանձնելէն վերջը, քու շնորհ.քովդ յաւիտենական փառք գտնելու, որ է աղքայութեանդ արժանի ըլլամ. Ամէն:

Հայր մեր. Ողջ. և Փառք.
Ողորմեայ մեզ, և այլն:

ԵՐԳ.

Անմահութեանց տուող Քրիստոս,
Ի հող մահու եդար 'ի փոս.
Զի յարութեամբդ տացես ինձ յոյս:

ԵՐԳ

ԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆՆ

Մայր հաւատոյ սուրբ հարմնական,
Եւ առագաստ գերագրական.
Տուն փեսայիդ անմահական,
Որ զարդարեաց զքեզ անվախճան։
Երկրորդ երկինք դու հրաշական,
Փառօք 'ի վերս բարձրական.
Որ զմեզ ծնանիս լուսոյ նման,
Աւազանաւդ որդիական։
Բաշխես ըզհացդ մաքրական,
Զարիւնդ ըմպել տաս սոսկական.
Հանես 'ի վեր գերաստիճան,
Յիմանալիացդն զուգական։

Եկայք որդիք նոր սիօնի,
Մատիք առ տէր մեր սրբութեամբ.
Ճաշակեցէք և տեսէք,
Զի քաղցր է տէր մեր զօրութեամբ:
Հինն օրինակ քեզ և նշման,
Դու խորանին գերագրական,
Նա խորտակեաց զգրոնս անդամանդ,
Դու դժոխոց զգրունսն 'ի հիմանց:
Նա բաժանեաց ըզՅորդանան,
Դու զծով մեղաց աշխարհական.
Նըմա Յեսու էր զօրական,
Եւ քեզ Յիսուս հօր միական:
Հացս այս մարմին է Քրիստոսի.
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդքն մեծ յայտնի.
Ատուած 'ի սմա մեզ տեսանի:
Սա է Քրիստոս բանն Աստուած,
Որ ընդ աշխարհ հօրն բազմի.
Եւ ասա 'ի մեզ պատարագի,
Բառնայ զմեղքս աշխարհի:
Այն որ օրհնեալ է յաւիտեան,
Հարբ և հոգւովքն միաբան.
Այժմ և յաւէտ և յապագայն,
Եւ յանընդատ միշտ յաւիտեան:
Ամէն:

Սպ. Սրբուհի Մարիամ սափոր ոսկի, և տապանակ կտակարանաց. որ զ'ի վերուստ զհացքն կենաց պարգևեցեր քաղցեալ բնութեանս. առ նա միշտ բարեխօսեա վասն քաւութեան մեղաց մերոց:

ԵՐԳ

ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Ե՛կ սուրբ հոգի ստեղծող էից,
Յայց եվ մըտաց քոց ծառայից,
Եւ վերնական շնորհաք քո լից,
Ըզքո ստեղծեալ սիրտ բոլորից։
Մըխիթարիչդ ամենայնի,
Եւ բարձրելոյն պարգև բարի,
Աղբիւր կենաց հուր կենդանի,
Սէր և օծումն իմանալի։
Դու եօթնարփեան շընորհք վերին,
Մատն հայրական աջոյ ձեռին.
Դու աւետիք հօր բարձրելոյ,
Որ տաս բարբառս բերանոյ։
Վառեա ըզլոյս 'ի զգայարանս,
Հեղ ըզսիրոյ քո ըզհոսանս.
Զտրկարութիւն մարմնոյ մերոյ,
Միշտ զօրութեամբ քո ամրացո։

Ի բաց վանեա զթշնամութիւն,
Եւ պարգևեա զխաղաղութիւն.
Զի քեզ յաւէտ առաջնորդեալ,
Առ 'ի չարեաց լեցուք զերծեալ։
Տուր ճանաչել մեզ քեզ ըզհայր,
Եւ զմիածին իւր հաւատար.
Եւ յերկոցունց զհոգիդ բղխեալ.
Յամենայն ժամ սերտ հաւատալ։
Փառքք պատիւ հօր Աստուծոյ,
Եւ միածնի յարուցելոյ,
Հոգւոյն սրբոյ մըխիթարչի,
Այժմ և յաւէտ անըրուելի։
Ամէն։

ՏԱՂ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Ըզքեզ Աստուած գովաբանեմք,
Եւ ըզքեզ տէր խոստովանեմք.
Ըզքեզ հայր մեր անժամանակ
Պաշտէ երկիր աւ հասարակ։
Քեզ հրեշտակաց զօրք ամենայն,
Երկինք և պետք միանդամայն.
Հոյլք քրովբէից և սրովբէից,
Անընդհատ լեալ ձայնակից,
Եղանակեն զերգս օրհնութեանց,
Սուրբ սուրբ սուրբ ես տէր զօրութեաց.
Լի են երկինք և երկիր համայն
Փառաւք քո մեծ վայելչութեան։
Զքեզ պանծալի դասքք սրբոց,
Երիտասան առաքելոց.
Պարքք գովեալ մարգարէից,
Տնօրէնութեանդ նախատեսից.

Դունդք լուսազգեաց մարտիրոսաց,
Գովաբանեն զանէրդ փառաց.
Ըզքեզ մինչև 'ի ծագս երկրի,
Դաւանիմ սուրբ եկեղեցի։
Ըզհայրդ մեծ անբաւելի,
Ըզմիածինդ քո զորդի,
Զմշխենթարիչ քո սուրբ հոգի,
Փառաւորիմ անընդհատ։
Գրիգորոս փառաց դու թագաւոր,
Անժամանակ ծընունդդ հօր.
Ի փրկութիւն մարդկան աղգի,
Խոնարհեցար յարգանդ կուսի։
Դու կոխեցեր զմահու խայթոց.
Զերկինս բացեր յուսացելոց.
Եւ համբարձեալ յաջմէ Նըստար,
Փառաւք ընդ հօր քո հաւասար։
Գալ միւսանգամ ես հանդերձեալ,
Ի դատել զազգս հողածնեալ.
Եւ արդ խնդրեմք օգնել մեզ տէր,
Զոր պատուական արեամբ գնեցեր։
Ընդ սուրբքս քո դասաւորեա,
Ի փառս անանց և յարակայ.
Ըզժողովուրդս քո փրկեա,
Զժառանգութիւնս քո տէր օրհնեա։

Հովուեա զնոսա և խնամարկեա,
Յայսմ հետէ և առ յապայ.
Զօր հանապազ զքեզ օրհնեսցուք,
Եւ զանուն սուրբ քո գովեսցուք։
Շնորհեա մեզ տէր զաւուրս կենաց,
Անցուցանել առանց մեղաց.
Ողորմեայ մեզ տէր ողորմեայ,
Եւ գթութեամբ 'ի մեզ հայեայ։
Ողորմութիւնդ լեցի 'ի մեզ,
Որպէս և մեք յուսամք 'ի քեզ.
Ի քեզ անձինք մեր յուսացան,
Մի ամաչեսցին 'ի յաւիտեան։
Ամէն։

ԳՈՎԱՍԱՆՔ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Տէր ողորմեա.
Քրիստոս ողորմեա.
Տէր ողորմեա.
Քրիստոս ողորմեա.
Քրիստոս ընկալ զպաղատանս մեր։
Հայր երկնաւոր Աստուած.
Որդի փրկիչ աշխարհի Աստուած.
Հոգի սուրբ Աստուած Ճշմարիտ.
Սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն.
Սրբուհի Մարիամ.
Սուրբ աստուածածին.
Սուրբ կոյս կուսանաց.
Մայր Քրիստոսի.
Մայր շնորհաց.
Մայր սրբութեան.
Մայր ողջախոհութեան.
Մայր անհարսնացեալ.
Մայր անբիծ.
Մայր ցանկալի.
Մայր հիանալի.

ողորմեա մեզ։ բարեխօսեա վասն մեր։

Մայր ստեղծողն.
Մայր փրկչին.
Կոյս ամենազգաստ.
Կոյս պատուելի.
Կոյս հռչակելի.
Կոյս կարող.
Կոյս գթած.
Կոյս հաւատարիմ.
Հայելի արդարութեան.
Աթոռ իմաստութեան.
Պատճառ ցնծութեան.
Անոթ հոգւոյն սրբոյ.
Անոթ պատուական.
Անոթ ջերմեռանդութեան.
Վարդ խմանալի.
Աշտարակ դաւթեան.
Աշտարակ փղոսկրեայ.
Ոսկեղէն տաճար.
Տապանակ ուխտի.
Դուռն երկնից.
Արուսեակ առաւօտեան.
Բժիշկ հիւանդաց.
Ապաւէն մեղաւորաց.
Մխիթարիչ ագաւորաց.
Քրիստոնէից օգնական.
Տիրուհի հրեշտակաց.
Տիրուհի նահատեսաց.
Տիրուհի մարգարէից.
Տիրուհի առաքելոց.
Տիրուհի մարտիրոսաց.

բարեխօսեա վասն մեր։

Տիրուհի վկայից.
Տիրուհի կուսանաց.
Տիրուհի ամենայն սրբոց.
Տիրուհի անարատ'ի յղութենէ.
Պահպանիչ որդեգրաց.
Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի.
Քաւեա տէր զյանցանս մեր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս.
Լուր մեզ տէր։
Գառն Աստուծոյ, որ բառնաս.
Ողորմեա մեզ։
Քրիստոս լուր մեզ։
Լուր մեզ հանապազ զքեզ աղաչեմք։

ԱՂՕԹՔ

Տէր Աստուած մեր, որ անճառելի ողորմութեամբ քով եղեր մարդ, և որդի մարդոյ լինել հաճեցար. և առ'ի կուսէն ծնանեալեմք, անժամանակ ծնունդդ Հօր 'ի յերկինս՝ ընտրեցեր քեզ մայր'ի յերկրի. և այժմ աղաչեմք, արա զմեզ արժանի ջերմեռանդն աղօթիւք փառաւորել զանուն նորա, և հրաշափառ մայրութեան նորա լինել բարեբանիչս, և զգերագոյն փառս նորա մեծացուցա-

նել, որ զքեզ Հոգւով սրբով յղացաւ, և կուսութեամբ ծնաւ, և սրբում հնազանդ եղեր Թագաւորդ յաւիտենից, տէր մեր Յիսուս Քրիստոս. որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն յաւիտեանս. ամէն:



ՊԱՂԱՏԱՆՔ

Ա Ո Ս Հ Ր Բ Խ Ա Հ Ն

Աստուած ամենակարող որ իմ ամենի մեղացս համար խաչափայտին վրայ մեռար ինձի հետ եղիր:

Սուրբ խաչ Յիսուսի Քրիստոսի ողորմեա ինձ,

Սուրբ խաչ Յիսուսի Քրիստոսի ըրէ որ փրկութեան ճանփան հասնիմ,

Սուրբ խաչ Յիսուսի Քրիստոսի զիս մարմնաւոր վտանգներէ ազատէ:

Ով Յիսուսի Նազովրեցւոյն սուրբ խաչ զոր կը պաշտեմ յաւիտեանս, ողորմէ ինձի. եւ ըրէ որ անտեսանելի չար

ոգին փախչի ինձմէ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Ի պատիւ անգին արեան Յիսուսի Քրիստոսի: Ի պատիւ մարդեղութեան որով կրնայ զմեզ առաջնորդել ի կեանս յաւիտենականս:

Կը հաւատամ այս ճշմարտութեանց այնպէս ինչպէս ստոյգ է որ Յիսուս Քրիստոս Ծննդեան օրը ծնաւ ու Անագ ուրբաթ օրը մեռաւ:

ԵՐԳԻՐ ԱՆԳԱՏ ՔՍԼ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Այս աղօթքը 1505ին գտնուեցաւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գերեզմանին ներքեւ եւ Քանանայապետը զայն Կարոլոս կայսեր դրկեց երբ թշնամեաց դեմ կռուելու համար բանակ մեկնուեցաւ:

1. Ով որ այս աղօթքը ըսէ կամ լսէ եւ կամ վրան ունենայ յանկարծ պիտի չմոնի, պիտի չխեղդուի, պիտի չայրի, պիտի չկարենայ թունաւորուիլ, թշնամեաց ձեռքը պիտի չիյնայ, պատերազմի մէջ պիտի չը յաղթուի:

2. Կին մը եթէ ծննդականութեան ատեն այս աղօթքը ըսէ կամ լսէ եւ կամ վրան ունենայ անմիջապէս պիտի ազատի եւ գորովալիր մայր պիտի ըլլայ եւ երբ տղան ծնանի պէտք է այս աղօթքը անոր աջ կողին վրայ դնէ եւ այսպիսի բազմաթիւ վտանգներէ պիտի ազատի:

3. Ով որ այս աղօթքը իր վրան կրէ վերնոտ կամ լուսնոտ ցաւերէ զերծ պիտի մնայ եւ երբ այս ցաւերէն բռնուած անձ մը տէսնէք այս աղօթքը աջ կողին դրէք եւ անմիջապէս ողջ եւ առողջ պիտի ելլէ:

4. Ով որ այս աղօթքը գրէ իրեն կամ ուրիշին համար պիտի օրհնեմ զանիկա

կըսէ Տէրն մեր եւ ով որ ծաղրէ
անարգէ պիտի պատժուի:

5. Ով որ այս աղօթքը վրան ունենա
շանթէ կամ կայծակէ պիտի պահպանո
եւ ով որ հանապազօր ըսէ այս աղօթ
երեք օր յառաջ երկնային նշանով մ
ըեն պիտի ծանուցուի մահուան օրը:

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL028001